

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«Մուրձ»

Մեր քաղաքի լառաջադէմ, վերածնուռած ամսագիր «Մուրձը» իւր վերջին համարում փոխանակ մեզ պարզելու իրան ուղղած պատասխանի մէջ այն կէտը, թէ Մալր Մաշտոցի փոխարէն ինքը ուրիշ ինչ նոր մատեաններ է առաջարկում, որոնցով իւր կարծիքով առաւել պահառանակ Հայ և կեղեցին և շարունակէ իւր հաղարաւոր տարիների դոլութիւնը, «խօսքը կտուրն է զցում» և դարձեալ կրկնում է «տէրտէրական, կղերական» խոսքերը, որոնցից «տէրտէրականը» մենք անմիտ ենք համարում այն պատճառով, որ զրականութեան մէջ ալդ տեսակ բառ. (տէրմին) ուղղութիւն որոշելու համար չէ ընդունուած. «Մուրձ» ամսագիրն է ստեղծում, որ մեզ համար ամեննեին վիրաւորական չէ: Մենք քահանակ ենք, մեր ամսագիրն էլ կարող է արդիւնք լինել մեր կոչման ուղղութեան. ինչպէս որ «Մուրճ» էլ իւր իմրադիրների պաշտօնի ուղղութիւնը կտրող է ներկալացնել. օրինակ. «Մուրճի ղեկավարներ պ. կառն Սարգսեանը նախկին ուսուցիչ է և պ. կէօն էլ նախկին տեղեգրաֆիստ. արդ ինչ կլինէր, եթէ մենք ևս «Մուրճը» անուանէինք վարժապետա-տեղեգրաֆիստական», որ նորնան անմիտ կլինէր իբրև ուղղութիւն որոշող տէրմին, որչափ և գրական ուղղութեանը չլատկացրած «տէրտէրական» բառը: Գալով այն բանին թէ մենք ուսումնարում տպում ենք ալնպիսի լողուածներ ես, որոնք մեր և կեղեցու կամ տոհմալին ալլ հաստատութեան անդրդուելի սկզբունքներին են վերաբերում, կաբժում ենք, որ ամեն մի հայ հրատարակութեան համար ինչ ուղղութեան էլ նա պատկանէր, սույր պարտականութիւն պիտի համարուի արդպիսի լողուածների տպելը, եթէ միան տառերով՝ չէ նա հայ թերթ:

Յառաջադէմ ամսագիրը բարեհաճում է ասել, որ մնաք-
իրաւունք ունինք տպել լօղուածներ ամեն տեսակ կրօնական-
մատեանների մասին. չնորհակալ ենք այդ թուլաւութեան հա-
մար. Սական դորանով «Մուրճոյ չէ պարզում այն կէտը, թէ
նա Բնչ մատեաններ է կարմոր համարում մեր եկեղեցու գորու-
թեան համար և արդեօք Բնչ է առաջարկում դոցա փոխարէնց-
թող հանդիսա մար. «Մուրճոյ, ոչ «տէրտէրական», ոչ «կղե-
րական» և ոչ ալ ալսպիսի գեղեցիկ ածականներ մեզ չեն կա-
րող վրդովել ինչպէս և մեզ չէ վրդովում քամելիօն «Քաղմա-
վէպի» նորերս փոխ առած կարմիր ներկը. մի գոյն, որ աւեն-
անզամ աքլարականչի ձարնին անմիջապէս սեանում է:

ՓԱՐԻՁԻ ՀԱՅ ՄԱՄՈՒԼ.

Ստացանք Փարիզում հրատարակուող հողագործական-
«Գութան» հալերէն ամսագրի վերջին թ.՝ 9 համարը (թ. տարի)
որ երկար ընդմիջումից լետոյ այս օրերս վերսկսուել է հրա-
տարակուիլ. Այս առթիւ անկարող ենք չնկատել այն բնորոշ
երևոլթը, որ կարծես պատմական ճայատագրական լատկանից
է գառել հալերիս համար. Փարիզում, ուր ոչ աւելի քան 250.
հալ ընտանիք կալ, բազմաթիւ հալերէն լրագիրներ և ամսա-
գիրներ են երեսում գրական հորիզոնի վերալ և ասուափի նման
աներնութանում կամ ժամանակաւորապէս դադարում և նորից
վերակեննդանանում. միննոյն ժամանակ անհաշտ բանակուիւ
մղելով միմեանց զէմ թէ իրանց թերթերում և թէ մանաւանդ
առանձին գրքուիկներով. Մենք ստացել ենք մի շարք այդ տե-
սակ բրոշկրներ, որոնց բովանդակութիւնը շատ հեռու լինե-
լով գրականութիւնից հալիտական խալտառակութեանց նմոլց-
ներ են միան. Փոխանակ որ երիտասարդ կարող ուժերը
մրանսիալի լուսաւոր կ'ոդրոնում գտնուելով առիթ ունենան
գիտութեան աղբիւթից լադեցնել իրանց ծարաւը և մեզ էլ
մասնակից անեն այդ նուիրական ջրին, միմեանց միսն ուտե-
լով և իրար խալտառակելով՝ առակ նշաւակի են դառնում
օտարների աչքում և դժբաղդաբար առիթ են տալիս ան-
նպաստ գաղափար կազմել հար վանտելիգէնցիալիս մասին, ո-
րին հրապարակագիրներից մէկը իրաւացի կերպով «վինտել-

Հեացին» (Ventillation) անուանեց. Բայց նրամի գեղեցիկ բան կլինէր, ևթէ Փարիզում գտնուած հակ երիտասարդութիւնը միացեալ ոլժերով զբաղուէր և անպիսի մի արդիւնք ցուց տար, որ արժանի լինէր ան երկրի անուան ու փառքին, ուր գտնուելու բաղդն ունին.

ԹԻՖԼԻՍԻ ՄԱՄՈՒՆԻԼ

Լոռում ենք, որ հայերէն «Մուրճ» ամսագիրը իւր նոր խմբագիր-հրատարակիչ Կ. Կրասիլնիկեանը վաճառել է իւր զլիսաւոր աշխատակից պ. Անն Սարգսեանին և մոսկուալարնակ պ. Ա. Պողոսեանին, որ մի ժամանակ 10 հազար ռուբ. էր նուիրել Հալոց Նրատարակչական ընկերութեան հայերէն զրքեր տպիլու և որ ընկերութեան փակման պատճառով լետ է ստացել:

Հաստատ աղքիւրից իմանում ենք, որ ճարտարապետ պէ-Նիկողալոս Գրիգորեանը մամսակցում է Անոր-Դար»ի հրատարակութեան և թերթը արդէն լոլո է տեսնում կանոնաւոր կերպով:

Թիֆլիսում հրատարակուող «ՏեղիՓօն» ամենօքեալ ռուսերէն լրագրի հրատարակութիւնը տպագրական գործոց գըլխաւոր վարչութեան կարգադրութեամբ անցաւ ճարտ. պ. Ն. Գրիգորեանի ձեռքը.

Լրագիրները հաղորդում են, որ «Արգօնատո ռուսերէն օրաթերթի իրաւունքը ձեռք է բերել պ. Ռուբէն Յովհաննիսեանը. «Կավկազսկի վեստնիկ» ամսագիրը խմբագիր-հրատարակիչ պ. Բ. Ղորդանսեանից գնել է երիտասարդ պ. Գ. Մէլիք Ղարագիրօնեանը, որ լալտնի է իւր լոգուածներով հակ և ռուս թերթերում: